

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ
Ստանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարազգայացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաօտեսան 10-2 ժամ
(Բացի կիրակի և սոն օրերից):

Յայտ տարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանակը բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները: Ներքին տե-
սւթիւն: Նամակ Բագուից: Նամակ Ղարաբե-
ղից: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: «Голос» լրագրի թղթակցութիւնը: Հայ-
կական գործեր: Թիւրքիա: Ֆրանսիա: Նամակ
Թիւրքիայից: Նամակ Պարսկաստանից: «Մշակի»
հետազոտներ: Յայտարարութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔ-ՆԵՐ

Նորերում մեզ աջողվեցաւ
կարգաւ կ. Պօլսի մէջ հիմնված
պաշտօնական «L'Osmanli» ֆրանս-
սերէն լրագրի յօդուածը թիւր-
քաց հայերի մասին: Այդ լրա-
գիրը որ իբր թէ խմբագրվում է
ուսումնական թիւրքերով, մեծ
վտանգ է տեսնում թիւրքաց
հայերի ազգային զարգացման
մէջ: Լրագիրը սաստիկ գովում
է քիւրդերին, հաւատացնում է
որ քիւրդերը ամենին արիւ-
նաբուն, վայրենի և հարստա-
հարող ցեղ չեն և աւելացնում է
որ հայերը յանցաւոր դիտաւո-
րութիւն ունեն տարածել քրիս-
տոնէութիւնը քիւրդերի մէջ և
գրաւել քիւրդ գաւառներին դե-
պի հայոց դպրոցները:

Բօլգարները, ասում է լրա-
գիրը, թէ և ապստամբվում էին
թիւրքերի դէմ և սպանում էին
թիւրքերին, բայց հայերը նրան-
ցից վտանգաւոր են, որովհետեւ
կոչաւորական ճանապարհով
կամենում են կլանել քիւրդե-
րին:

Բօլգարները մարդիկ էին ըս-
պանում, ասում է թիւրքաց
պաշտօնական թերթը, իսկ հա-
յերը կամենում են փրկել քիւր-
դերին նրանցից քրիստոնէաներ
և հայեր դարձնելով: Արեւմտե
աւելացնում է թերթը, քիւր-
դերի կամքի դէմ հայերը կամե-
նում են նրանց քաղաքակրթել:
Արեւմտե որտեղ է հասել թիւր-
քաց պաշտօնական մամուլը, որ
այժմ հայերից էլ վախենալ է
սկսում, որպէս մի վտանգաւոր
կլանող տարրից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

13 սեպտեմբերի

Հասարակական կեանքը Բագուի մէջ այժմ գտն-
վում է կատարեալ թմրութեան մէջ: Այդ տխուր
երևոյթի պատճառը պէտք է վերաբերել մեր երի-
տասարդութեան դէպի հասարակական շահերը ու-
նեցած անտարբերութեանը: Շատ պարզ և հաս-
կանալի է, որ մի ժողովուրդի, մի հասարակու-
թեան կեանքին այսպէս թէ այնպէս, բաւ կամ
վատ ուղղութիւն տալը գլխաւորապէս կախված
է նորա երիտասարդութենից: Եթէ նորա այդ
թարմ ոյժը, այդ կենդանի տարրը որքան և ինչ
կարողանում է ծանախել և կատարել իր պարտ-
կանութիւնները հասարակական բարօրութեան վե-
րաբերութեամբ, այն ժամանակ դուրս ժողովուրդը
կարող կը լինի պարծենալ, որ նա հասել է զար-
գացման մի որոշ աստիճանի: Բայց ինչ աս-
տիճանի կարող եմ դասել մեր ժողովուրդի
զարգացումը, որի երիտասարդութիւնը, կու-
րացած անձնական շահերի անախելու զգաց-
մունքներով, ընկած տգիտութեան և անբա-
րոյակամութեան մէջ, ներկայացնում է մի վիշա-
ցած սերունդ: Ինչ ապագայ կարելի է նախագո-
րակել այն հասարակութեան համար, որի որդիքը
նոյն իսկ անհիկական հասակից շարքակելով վա-
րակի ախտերով, օրքստօրէ մահանում են բարո-
յապէս: Շատ հասկանալի է, որ այդ տեսակ հա-
սարակութիւնը երբեք չէ կարող սպասել մի նա-
խանձելի ապագայի: Ահա այդ դրութեան մէջ է
գտնվում Բագուի հասարակութիւնը, երբ մի կողմ-
նակի հայեացք ենք ձգում այն կորստաբեր ուղ-
ղութեան վրա, որին կուրացած հետեւում է նոր
սերունդը:

Ի՞նչ երիտասարդ հասակում հայ վաճառականը,
թողնելով իր հայրենի երկիր և հեռանալով դե-
պի Ռուսաստանի զանազան քաղաքները, սկսում
է շուայել և ծախսել իր ձեռքի փողերը անբարո-
յական գողարձութիւնների մէջ, և դրանով ապա-
ռում է թէ իր ներթափան և թէ ֆիդիլական ու-
ժերը: Նա դառնում է իր հայրենիքը դեղնած, մաշ-
ված, չարիք տարեկան ծեղրուծու քաղաքակրթ-
մուածքով: Նա չէ բաւականանում նրանով, որ
սպանել է իր կեանքը շուտով ամուսնանում է և
գրանով խաւարեցնում է մի ուրիշ անբաղդ էակի
կեանքը, որին վիճակվում է համբերութեամբ մին-
չև մահ տանելով անտանելի ամուսնի չեւ: Այդ
մի բարբարոսական մարդապաշտութիւն է, որի
վրա մտածելու ժամանակ մարդ տարտաւում է: Նա
կամենում եմ մի քանի խօսք ես ասել՝ այն պա-
րենքների մասին, որոնք իրանց աշխատում են հե-
ռու պահել հասարակութենից, որոնք լուսաւորված
կոչված երիտասարդներն են: Բայց կարելի է պահան-
ջել սրանցից որ և ինչ օգուտ, մինչդեռ դրանք անմատ-
չելի են հասարակ մահկանացուներին, մինչդեռ դո-
րանց և հասարակութեան մէջ կայ մի չլինական պատ-
հարկաւոր է շատ ստիկ ծանօթ լինել այդ ֆանե-
ֆարօնների չեւ և հասկանալ թէ, որքան դադար-
կութիւն, որքան անմիտ ինքնասիրութիւն է տի-
րում սրանց մէջ: Ազգային գաղափարը սրանց հա-
մար ոչինչ նշանակութիւն չունի, սրանք միայն անձ-
նական շահի գաղափարով են հետաքրքրված: Այդ
է պատճառը որ սրանք նոյնպէս հասարակութեան
համար անօգուտ են հանդիսանում:

Մեր ամբողջ անկեղծաւ և միանգամայն վա-
սակար տողութիւններից մէկն էլ անշուշտ պէտք
է համարել նրա եւրօպական շուայ մօղային հետե-
ւելը: Բագուի ոչ մի ազգայնականութեան մէջ ար-
տաքին անմիտ պնդասիրութիւնը այնքան զարգա-
ցած չէ, որքան հայ ազգայնականութեան մէջ, մա-
նաւանդ նրա իրական սեւի մէջ: Այդ շատ բնա-
կան է այն ժողովուրդի վերաբերութեամբ, որը դեռ
չէ կարողանում ըմբռնել այն անհեշտապաշտակ
միտքը, թէ լուսաւորութիւնը չէ պարտաւորվում
յոյ արտաքին ձեւերի փոփոխութեան մէջ: Հայ օրի-

որդի, հայ երիտասարդի ուղարկութիւնը ոչ մի բան,
ոչ մի առարկայ այնքան շուտ չէ գրաւում, որքան
մի նոր տեսակի հագուստն է գրաւում: Հէնց
որ մէկի վրա տեսնում են հագուստի մի նոր ձեւ,
բոլորն էլ թէ հարուստ թէ աղքատ, յիմար ոչ-
խաբերի նման, կը շտապեն հետեւ նրա օրինա-
կին, չը նայելով իրանց կարողութեան չափի վրա:
Այդ տխուր իրողութեան մէջ առաւել հաստատ
համոզելու համար բաւական է մտնել կիրակի
կամ տոն օրերը մեր եկեղեցիները և ուղարկու-
թիւն դարձնել առհասարակ, հանդիսականների
և մանաւորապէս կանանց դասակարգի վրա:

Թեթեամիտ հայ աղջկայ մօղամօղութիւնը այն
տեղն է հասցնում նրան, որ նա՝ սկսում է հետդ-
հետէ մոռանալ իր տնային գործերը, իր ընտանե-
կան պարագայները, ուսումնարանի կրթութիւնը
և գիշեր ցերեկ դառնել «Русский Базар», «Мо-
рису» և այլն սոցա նման շուայութիւն
տարածող օրագիրներ թերթերով: Աղջկայ մէջ այդ
վնասակար ձգտողութեան զարգանալուն մեծ մա-
սամբ նպաստում են նրա ծնողները, որոնք իր չնց
զաւակների մանկական հասակից սկսում են մի
առանձին ուղարկութիւն դարձնել նրանց արտաքին
զարգարանքի վրա, մի և նոյն ժամանակ անուշա-
ղիք թողնելով նրանց մտաւոր և հոգեկան կրթու-
թիւնը: Նա հաւատացած եմ, որ այսպիսով հայ
ծնողները վատ ներգործութիւն են անում իրանց
զաւակների կրթութեան վրա, նորա ծննցնում են
երկեսայի մէջ նեղ անձնասիրութեան զգացմունքը,
որը ապագայում զարգանալով նրա մէջ, սպանում
է ուրիշ աղին ձգտումներին: Նրեանք (աղջկա-
րծնած օրիք, ծնողները աշխատում են որան կա-
րելի է ամուր լքցնել նրա համար նշանակալի
մեղուկը զարգարանքներով: Ինչ շատ անգամ պա-
պահել է տեսնել այնպիսի ընտանիքներ, որոնք ի-
րանց երկու երեք տարեկան աղջկայ համար պատ-
րաստում են 10-15 տարեկանը հագուստներ:
Հարցնում եմ՝ թէ ինչու համար են նորա այդ ս-
նում. պատասխանում են, «հնչու ես չանեմ, երբ
Փամբուխանցի կամ Պետրոսեանցի տանը անում
են»: Այդ տեսակ վարմունքը բնայն վերաբերե-
ալիք հայի կապիկութեանը, թէ յիմար նախա-
նձին: Նա կարծում եմ, որ երկուսն էլ: Բայց թէ
Փամբուխանցի կամ Պետրոսեանցի իրանց աղ-
ջատանքի մի մասը եւս դնում են զաւակների մը-
տաւոր կրթութեան վրա, այդ միտքերի համար
ոչինչ նշանակութիւն չունի: Վերջացնելով նամակս,
միւս անգամ կարծաւորեմ մի քանի խօսք ասել նա
և արական սեւի մասին, որը գուցէ կանանցից
շատ յետ չէ մնացել շուայութեան մէջ:

Ա. Մօվսեսեան

ՆԱՄԱԿ ՂԱՐԱՔԱՆԻՍԻՑ

12 սեպտեմբերի

Վառաժարութիւնից հրապարակված է, որ մինչև
հոկտեմբերի 10-ը երևանի նահանգի գիւղերում
նոր տանտէրներ ընտրվեն: Պարզեմ, այս կար-
գադրութիւնը ամենեւին ձեռնառու չէ ան տանտե-
տէրներին, որոնք իրանց կուպիտ վարմունքով և
անխիղճ հարստացումով և զուգահեռ չեն
հասարակութեանը, այլ եւ ընտրվելու յոյս չունեն:
Այս տեսակ տանտէրները ժողովուրդի արիւնք
ծծող անկուշտ տղորդներ են, որոնք բացի ժողո-
վրդին կողոպտելուց ուրիշ օգուտ չունեն:

Շատերը այդ պաշտօնի մէջ մտնելու համար ինչ
տեսակ կեղտոտութիւններ անեն, որ չեն անում.
հում ձեռքը համբուրելու է, ոտքերն են համբու-
րում, ում պատվել է հարկաւոր, ոչինչ չեն ինա-
յում, հոս կաշուք է հարկաւոր, եղներն են ծա-
խում, չուս ստղին ջան են ասում: Ամեն մի դը-
րացու խնդիրը ամենայն ուրախութեամբ կատա-
րում: Ամենքին սիրելի բարեկամ են ձևանում... մի
խօսքով մինչև ընտրութեան օրը այս պաշտօնի
վրա սիրահարված մարդիկը դառնում են հասա-
րակութեան գերին, մշակը, երեխան... Իսկ երբ
ընտրութիւնը վերջանում է, և այս տեսակ ցած-

րահող մարդիկանց տանտէրութիւնը չէ ստատ-
վում է, այն ժամանակը երկկայ դառն այսօր
զայլ է դառնում և կեղեքում է իրան հանդիպող-
ներին... ում երկու բաժակ թէյ էր խմացրել, նը-
րանից տան է դուրս բերում, ում մի շալի էր
տուել, նրանից բուրլիներ է պոկում... և այսպի-
սով բոլորից իր ծախսն ու վնասը չանում: Վայ
նրանց, որոնք ընտրութեան ժամանակ մի քիչ ուշ
են համաձայնել: Ահա, այսպիսի տանտէրները
դառնում են ժողովուրդի հոգեւուն և իրանց ուղա-
ծի պէս պտուղեցնում են տղէտ և աղքատ ամա-
րիւն: Այդ տեսակ տանտէրներից մէկը դիցուք
իր ժողովուրդի մէկի հետ անձնական հաշիւ ունի,
եթէ գործը յօգուտ իր չէ վերջանում, նա ամեն
տեսակ կեղտոտ միջոց գործ կը դնէ և իր վրէժը
նրանից կառնէ: Ծանոթե՛ք ասեց մածոնք ուն է,
հասարակութիւնը պէտք է կրկնէ «Այն, հրամանը
ես, սե է»: Վայ նրան, որ հակառակից, իսկոյն
հասարակական վիճուր կը կրէ տանտէրը թէ
«Բիւն մարդը շատ խառնակ է և խռովարար
մարդ է, չենք ուզում մեր դիւրը մնայ...»: Մի շնե-
ծու կեղտ էլ վրէն կը դնեն և հասարակութեան
բռնի ստորագրել կը տան: Հէնց լրացելը յետոյ այդ
ճշարտաւոր մարդը, մի բան էլ փնջի տակը՝ կը
ներկայանայ տանտէրին և կազաչի «Վեղայ Աս-
տուծոյ, աղայ, մա՛ծոնք ոչ միայն սե է, այլ սեա-
դոյն է, բոլորովին սե դա՛մբում է»: Մարդ կայ
տարին 20 անգամ կու է քաշում, մարդ կայ մի
անգամ էլ չէ: Մարդ կայ ինչպէս տներ ուղիւնայ կը
չինէ, պատերը աղաւտ այս և այն կողմից կը դնէ,
մարդ էլ կայ որ չէ՛նք բաճը ձեռն առաւ մի ա-
խաւ շինելու, իսկոյն տանտէրը վրա կը հանի
կամ բոլորովին կը խափանի և կամ այնպէս կը
սազմանաւորակի, որ խեղճի շինութիւնը կը դառնայ
մի կոպէկ: Օրինակները շատ շատ են:

Ահա, այս բոլոր ճանապարհները աչքի առաջ
ունենալով, երկու բարեկամական խօսքով դառ-
նում եմ դէպի մեր հասարակութիւնը: Պէտք է թող-
նել կըքերը, եսակամութիւնը և տանտէրի հարցը
առանց կրքի վիճել: Պէտք է թողնել այն ձեւը, որ
Մարդը իր քեռուն է ուղում, իսկ Վիրապը իր
խնամուն. պէտք է թողնել անձնական մանր մուծը
հաշիւները և ընտրել այնպիսի մի մարդ, որ բա-
րեկիղճ լինի:

Վերջերի մէջ լաւ տանտէրը մեծ նշանակու-
թիւն ունի. դիւրի դեկալարողը տանտէրն է:
Եթէ տանտէրը տղէտ և անտարբեր է, կամ ան-
բարոյական է, էլ այն հասարակութեան միջոց
խռովութիւնը անպակաս կը լինի: Նրանի այն
գիւղի հասարակութեան, որի քեռովն և քահանան
լաւ են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Սեղ խնդրում են ուղղել մի սխալ. «Մշակի»
№ 154-ում Արագածից գրված նամակի մէջ առ-
ված էր, թէ զգաւաւապետը իր ձիաւորներով եր-
կար որոնելուց յետոյ, քարերի կոյտերի միջոց
գտաւ Քալբայայ Աղլիի կողոպտած ապրանքնե-
րը: Այդ ապրանքները ոչ թէ գաւառապետն է
գտել, այլ նրա առաջին օգնական պ. Վաղայշակ
Շահխանութեանցը, որի նման կարգապահ և ար-
թուն պոլիցիական դեռ չէ եղել: Աղքատադուր-
լում:

ՂԱՐԱՔԱՆԻՍԻՑ գրում են. Քալբայայ-Աղլի
աւագակապետի սպանվելը ընդհանուր ուրախու-
թիւն պատճառեց այդ կողմերում. ժողովուրդը
փառք է տալիս Աստուծուն, որ ապաւովեցաւ այդ
բարբարոսից:

ՀԱՄԱԶԻՄԱՆԻՑ գրում են. տեղային հայոց
դպրոցի վարժապետը իր ուժով կը չը ստանալով,
զանգաւորեց հոգաբարձութեան վրա Ղարաբեղի-
սայի հաշտարար դատաւորի մօտ: Դատարանը

վճռեց յօգուտ վարժապետի, և պարտաւորեց հա-
տարածութեանը 650 ռուբլի վճարել նրան:

ՂԱՐԱՔԻՆԻՍՍԵՅ

գրում են. չը նայելով որ
հանձնը այս տարի շատ լաւոյ էր, բայց տակա-
ւին հացը չէ է ժամանակ, որովհետեւ երկրագործնե-
րը իրանց բերքը չեն վաճառում, այլ ամբարնե-
րում պահում են աւելի թանկ վաճառելու յուսով:
Նոյն տեղից շնորհակալութիւն են յայտնում պ.
Փրոմանանցի մասին, որ շատ հոգ է տանում
Ղարաքիւսայում կարգ, կանոն և մաքրութիւն
պահպանելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԴՕԼՕՇԵ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆԸ

«ԴՕԼՕՇԵ»-ի մէջ կարդում ենք հետեւեալ
թղթակցութիւնը Տրապիզոնից:

Տրապիզոնի երեսուն հազար բնա-
կիւնների թիւը երկու օրվայ մէջ գրեթէ
կրկնապատկեցաւ. թիւքաց սարսափներից
ազատվող հայ կանանց, երեխաների և
ծերերի խմբերը լցրին քաղաքը: Նրանք ա-
մենքն էլ Կովկաս են փախչում, որպէս
զի իրանց եղբայրակիցների մօտ ապաստա-
նարան գտնեն: Սովից ամիսներով տանջված,
արիւնահեղ դրամների աւարաններից սար-
սափած հայ կանայք և երեխաները մարդ-
կային կմաղբի են նմանում: Այնուամենայ-
նիւ ինքնապաշտպանութեան զգացմունքը և
իւրայինների շրջանի մէջ հանգստանալու յոյսը
քաջութիւն են տալիս թող արարածներին:

Ողորմելի գաղթականների պառնաճների
համեմատ հայ ապստամբների կատաղու-
թիւնը չափ չունի, բայց թիւքերի չարա-
գործութիւնները և նրանց կատարած սար-
սափելի գործերը նոյնպէս չափ չունեն:
Դաշոյններով յղի կանանց միջից կիսերը
ամբողջ ընտանիքներին կենդանի այրելը,
կոյս օրիորդներին բռնաբարելը սովորական
երեւոյթներ են դարձել: Ասում են, որ հայ
ապստամբները զենքերի և ուսետոփ մեծ
պակասութիւն ունեն, իսկ այդ հանգաման-
քը միջոց է տալիս թիւքերային ձեռք ա-
պստամբութիւնը, մինչև անգամ արեան
հեղեղների դեմով, որոնց մէջ խեղդված
թիւքը դիակների թիւն էլ պակաս չի լինի:
Այս հանգամանքը շատ օգտակար է Սա-
մի-Վաշայի և նրա զօրաբաժնի համար,
որի թուում բաւական շատ բաշխուցուկների
խուճեր կան: Նա միջոց կունենայ բաւա-
կանացի իր զօրքերին, որոնք քառաուռն ա-
միսների ընթացքում ուժիկ չեն ստացել:

Նոյն Սամի-Վաշայից նահանգապետնե-
րին և կայմախաններին տուած հրամանների
համեմատ բնակարաններից զրկված գաղթա-
կանները բաւական չարաչափ են Հայաս-
տանի խորքերից Տրապիզոն գալու ժամա-
նակ: Եւրաքանչիւր գիւղի մօտ գաղթական-
ների վրա յարձակվում էին զինաւորված
գաղթիւնները, որոնք զիւրական օկարգապահ-
մեքներին իշխանութեան տակ են: Պատ-
ճառ բերելով որ հայերը գաղթելու հրա-
ման չունենին, գաղթիւնները հայերից վարձա-
տրութիւն էին պահանջում: Ոչ մի կոպէկ
փող չունենալով, ողորմելի հայերը սեփա-
կան երեխաներին դերութեան էին տալիս,
որպէս զի այդպիսի հոգերի դեմով կարողա-
նան ազատվել յարձակվող զաւանսներից:
Այդ գործերը կրկնվում էին անընդհատ
մինչև Կիւմիշխանէ քաղաքը, որ Տրապի-
զոնի վիլայեթի մէջն է գտնվում: Այդ քա-
ղաքի մէջ բաւական շատ հարուստ յոյներ
և հայեր են բնակվում, այնպէս որ ասնջ-
ված և ուժաթափ ձանապարհորդները
այդտեղ կարողացան մի փոքր շունչ քաշել
և ողբալ իրանց զոհած երեխաներին:

Հայերը և յոյները ինչ որ կարողացան տուին
գաղթականներին փողից և հագուստից
սկսված, մինչև հացը և ոտնամանները:

Կիւմիշխանէ քաղաքի մէջ մի փոքր
հանգստանալուց յետոյ գաղթականները
ուղևորվեցին Տրապիզոն, որտեղ նրանց մի
նոր տարաբաղդութիւն էր սպասում: Մի
փոքր փող ձեռք բերելուց յետոյ 300 հոգուց
բաղկացած մի խումբ, որի թուում ընդա-
մենը քսան ծերուկ տղամարդիկ կային, մի
լազից առագաստաւ որ նաւ վարձեց կովկա-
սան ափերի մօտ իջնելու համար: Առա-
ջուց փող տրամալով, լազը հեռացաւ ափե-
րից և ուղարկեց իր զինաւորված ընկերին
նաւի վրա նստողներին ասելու համար, թէ
նրանք բոլորն էլ ծովը կը նետվին, եթէ
իրանց բոլոր գոյքը չը տան: Կարելի է
երեւակայել անպաշտպան կանանց և երեխա-
ների դրութիւնը: Նրեխաները և կանայք
չոքած՝ Աստուծոյ անունով խնդրում էին
նաւատել լազից խղձալ նրանց, բայց լազը
անողոր զանգեցաւ և կրկնեց իր սպառնա-
լիքը բոլորին ծովը գցել, եթէ իր հրամա-
նը չը կատարվի: Դրանից յետոյ զինաւոր-
ված երեք լազերը սկսեցին փնտռել գաղթա-
կանների գոյքը և մի և նոյն ժամանակ ան-
աւթութեամբ նայում էին մատաղահաս օրիորդ-
ների և երեխաների բոլոր հագուստները:
Բոլորովին մերկացնելուց յետոյ, չարագործ-
ները մօտեցան անմարդաբնակ ծովափին և
հրամայեցին բոլորին ափ իջնել, ապառնա-
լով հակառակ դէպքում բոլորին կոտորել:
Ողորմելիներին այդ անմարդաբնակ տեղը
թողնելով և ուշադրութիւն չը դարձնելով
նրանց տանջանքների և աղաչանքների վրա,
չարագործները անհետացան դէպի ծովը:
Միայն երեք օրից յետոյ Տրապիզոնի մէջ
սկսեցան անտէր թողած երեք հարիւր
հոգու մասին: Ահա այսպէս է հոգում
Թիւքերի ապահովել իր լայանների վիճա-
կը, Հայաստանի մէջ վերանորոգութիւններ
մտցնելով:

Աստուծոյ թափառականներին սովից աղա-
տելու համար Տրապիզոնի երկրաստորութե-
ան վրա օգնող մասնաժողով կազմեց և բո-
լորի մասին պատրիարք Ներսէսին մանրա-
մասն տեղեկութիւններ տուեց: Պատրիարքը
իսկոյն խնդրեց հեռագրով ոչինչ չը խնայել
նորեկներին օգնելու համար, որոնցից շատե-
րը խմբերով լցրել են և Սամսունը: Մի և
նոյն ժամանակ հայոց պատրիարքը ուղար-
կեց Բօմբիլիան եպիսկոպոսին, նշանակելով
նրան մասնաժողովի նախագահ և դրամ
տալով գաղթականներին բաժանելու համար:
Երոշման. գաղթականները թիւքը չափա-
զանց մեծ է, հսկել թէ հայոց պատրիար-
քը կարող է նրանց պէտքերի համար բա-
ւականացուցիչ միջոցներ գտնել, եթէ ուսու-
բնակ հարուստ հայերը չեն օգնի:

Մի քանի օր առաջ այստեղ էին երգու-
մի անգլիական հիւպատոս Տրոտտը և
Բեկկեր-Վաշա, որոնք Կ. Պոլսի էին ուղևոր-
վում: Բեկկեր-Վաշա մի հասարակ արկա-
ծախեցիկ է, որ այժմ թիւքաց ծառա-
յութեան մէջ է: Նա լոյս ցերեկով երկա-
թուղով վազոնի մէջ անպատել էր մի լաւ
ընտանիքին պատկանող օրիորդին և այդ
պատճառով արտաքսված է անգլիական ծա-
ռայութենից: Այժմ այդ բաղդանդիւրը
իրանից մի ծարտարապետ է ներկայաց-
նում, որ մտադիր է վերանորոգել թիւք-
քաց փառած պետական կազմակերպութիւնը:
Ուսած և փքած, մօնօկը (հատակնոց) աչ-
քին ձանապարհորդելով Հայաստանի մէջ,
Բեկկեր-Վաշա հեռաքրքրութեամբ նայում
էր գանգատներ տուող զեղեցիկ հայահի-
նների վրա, որոնք նրան զօրեղ և մի և նոյն
ժամանակ իրանց անտանելի դրութիւնը
թիւքեացնելուն ընդունակ մարդ էին հա-

մարում: Նրա ուղեկից հայ թարգմանիչը
կօմիսկան շատ պատկերներ է պատում
նրա ձանապարհորդութիւնից Հայաստանի
մէջ, որտեղ Բեկկեր-Վաշա տանջված հա-
յերից առնում էր խնդրագրիները մաքուր,
սպիտակ ձեռնոցները հագած ձեռքերով:
Կարելի է երեւակայել, թէ ինչ տեսակ հեռա-
խօսութիւն կարող էր անել այդպիսի դա-
տարկ աճանախը: Առհասարակ հաւատաց-
նում են, որ եթէ Տրոտտը երգրումից իր
հետ չաւանդ Բեկկեր-Վաշային, նա պ. Գոշե-
նին շատ աննպաստաւոր տեղեկութիւններ
կը տար Հայաստանի մէջ վերանորոգու-
թիւններ մտցնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐ

«Բէյութի» ընկերութեանը Կ. Պոլսից հե-
ռագրում են սեպտեմբերի 16-ից, որ ան-
գլիական հիւպատոսը Վանի մէջ հեռագրեց
Կ. Պոլսի անգլիական դեսպանատանը, որ
թիւքերը բնաջինջ արին հայոց 13 դիւ-
ղեր:

«ԴՕԼՕՇԵ» լրագրին գրում են Կ. Պոլսից,
որ թիւքաց կառավարութիւնը «արագ և
վճռորական» ընթացք է տուել Փոքր-Ասիայի
գործերին: Ընդելով Սփրատի ափերից Կ.
Պոլսի լավի հառաչանքները, թիւքաց
կառավարութիւնը ուղարկում է հրաման
հրամանի ետեւից արագ կոտորելու համար
քրիստոնեաներին, որոնք թեւաւորվել են
«Մօսկվայի» հարեւանութիւնից և եւրօպայի
պաշտպանութիւնից: Նրա եւրօպական թըղ-
թակիցները սկսեցին տարածել Հայաստանի
մէջ պատահած անցքերի նկարագիրները:
Սայիդ-Վաշա հրամայեց իր լրագիրներին
զարմանք յայտնել այն ճշուտ տեղեկութիւն-
ներին մասին, որ տարածում են «չարա-
կամ մարդիկ» տւելի ամենահաւատա-
րիւմ լայանների մասին, որոնք ամենակարճ
ժամանակամիջոցի մէջ կը ստանան սուլ-
թանի ողորմութիւնները: Խօսք չը կայ, որ
Թիւքերի իր գործը զիտակցաբար է կա-
տարում: Նրա Սայիդ-Վաշա Հայաստանից
եկած արտաքին լուրերի հակառակ հա-
ւատացում էր Ներսէս պատրիարքին, իբր
թէ պատահած «դաւաճան» անցքերը չա-
փազանցաբար են, հայոց պատրիարքը
բարկացած պատասխանեց. «Եթէ այդպէս է,
ես ինքս կեղծվում իմ ժողովրդի մօտ և
անձամբ կը ստուգեմ նրա իսկական դրու-
թիւնը»: Սփրատ-Վաշա վախեցաւ Ներսէսի
այդ համարձակ մտքից, որովհետեւ գիտէ,
որ հայոց պատրիարքը իր ասածը միշտ կա-
տարում է: Միւս օրը «Ասիկիթ» լրագիրը
յայտնեց, որ հայոց պատրիարքը մտադիր է
գնալ Հայաստան և հայ ապստամբների գը-
լուխն անցնել: Բացի այդ, լրագիրը Ներսէսին
երկրի մարդ անուանեց, որ ցերեկը կռիւ-
լավա է կրում, իսկ գիշերը դրած:

«Jurnal de St Petzbourg» իր այսօրվայ
քաղաքական տեսութեան մէջ ասում է
հետեւեալը:
Ինչպէս յայտնի է, անգլիական պարլա-
մենտի վերջին նիստերից մէկի ժամանակը
կառավարութեանը հարց առաջարկեցաւ
Հայաստանի մէջ արեւնական լիգայի նման
քիւրդական լիգա կազմելու մասին, իսկ
կառավարութիւնը պատասխանեց, որ զրա
մասին իրան ոչինչ յայտնի չէ, բայց որ Կ.
Պոլսի անգլիական դեսպանից կը պահանջի
հարկաւոր տեղեկութիւնները: Դրանից յե-
տոյ անգլիական պարլամենտը փակեցաւ և
պ. Գոշենի պատասխանը մինիստրութեան
հարցին այնպէս մնաց: «L'Ozmani» լրագիրը
սեպտեմբերի 13-ին հրատարակած իր հա-
մարի մէջ կարելի է համարում փարստեղ
այդ անյայտութիւնը, տեսելով, որ անգլիա-

կան դեսպանը լրագրի ունեցած տեղեկու-
թիւններից աւելի ձիւտ տեղեկութիւններ
չէր կարող ստանալ: «Ozmani» լրագրի այդ
տեղեկութիւնները ի հարկէ բացառական
են: Ահա ինչ է ասում Կ. Պոլսի լրագիրը
քիւրդական լիգայի մասին: «Մինչև այժմ
մեզ ոչինչ յայտնի չէ քիւրդական լիգայի
դրութեան մասին այն ձևով, ինչպէս արա-
նացիներն են կազմել: Մինք կարող ենք պըն-
դել, որ այդ լիգան բոլորովին չը կայ: Ի
հարկէ մենք խօսում ենք ներկայ բուլի և
ոչ թէ ապագայի մասին, որովհետեւ եթէ
ապագայում կը կազմվի քիւրդական լիգա
արեւականի նման, ո՞չ ո՞չ, այլապէս կանից
անհամեմատ ուժեղ և սպառնալի, նրա
կազմելու միակ պատճառը եւրօպական
դիպլոմատիան կը լինի: Եթէ այսօր մեզ
հարց առաջարկէին Քիւրդիստանի մասին,
կարող էինք հաստատ ասել, հաւանաբար
լինելով, որ մեր ասածները չեն հերքվի,
որ Քիւրդիստանի նշանաւոր բնակիչները չա-
փազանց շփոթված են «Հայոց հարցից», որ
զարթնում է եւրօպան վերանորոգու-
թիւնների անունով: Եւ հէնց որ քիւրդերը
կը տեսնեն, որ նրանց կամենում են Արեւե-
կան-Ռումելիայի բնակիչների վիճակին են-
թարկել, նրանք իսկոյն կը կազմեն իրանց
լիգան: Եթէ մենք օգուտ քաղէինք եւրօ-
պական լիգաների դարձումից և ասէինք
թէ քիւրդերը ոտքի կը կանգնեն, ինչպէս
մի մարդ, մենք ճշմարտութենից հեռացած
էինք լինի: Քիւրդերի մի մասը թափառա-
կան կենսեք է վարում, նրանց բնակարանները
և կայքը իրանց ձիւնների մէջքին են: Ու-
րեմն նրանց ոտքի կանգնեցնելու համար
բաւական է հրամայել նրանց ձի նստել:

Ուրեմն «Ozmani» լրագրի ասածի հա-
մեմատ Հայաստանի մէջ չը կայ քիւրդական
լիգա, բայց նա մի վայրկեանի մէջ կը կազ-
մվի, եթէ վերանորոգութիւնների անու-
նով եւրօպան կը բարձրացնի հայկական
խնդիրը: Այդ նպատակին հասնելու համար
բաւական է հրամայել քիւրդերին «ձի նստ-
ուել»: Բայց ո՞վ կը տայ այդ հրամանը:
Թիւքաց լրագիրը այդ հարցին պատասխան
չէ տալիս, բայց Ալեքանդր օրինակ աչքի
առաջ ունենալով, դժուար չէ իմանալ: Ծե-
տոյ «Ozmani» հաւատացնում է, որ եթէ
Քիւրդիստանի մէջ կազմվի էլ մի լիգա, նա
քրիստոնեաներին թշնամի նպատակներ չի
ունենայ և աւելացնում է. «Իսկապէս մեր
երկրի մէջ չէ կարելի մինչև անգամ մի
մահմեդական գտնել, որ քրիստոնեաներին
թշնամի նպատակներ ունենալ»: Այսպիսի
խօսքերին ինչ կարելի է պատասխանել:
Պատասխանի տեղ «Ozmani» լրագրին մենք
հետեւեալ հարցը կառաջարկենք. Ուրեմն
ինչ զգացմունքից, եթէ ոչ անհաշտ թըղ-
նամութեան և վայրենի ատելութեան զգա-
ցմունքից առաջացան այն բոլոր բարբարոսա-
կան տանջանքները, արդարադատութեան
մերժումը, այն հարստահարութիւնները,
այն անթիւ և անհամար անգլթութիւնները,
որոնք յուսահատացրին թիւքերաբնակ քը-
րիստոնեայ ցեղերին և նրանց ձեռքը զէնք
տուին:

ԹԻՒՐԻԱ

«Politik Correspond» լրագրին Կ. Պոլսից, սեպ-
տեմբերի 10-ից գրում են հետեւեալը:

Անգլիական նաւատորմի հրամանատարին
տուած պատուէրները իրաւունք են տալիս
նրան հարկաւոր դէպքում այլապէս նրան
առաջնորդների հետ բանակցութիւններ ըսկ-
սել: Եթէ այս լուրը ձիւղ է, ուրեմն ան-
գլիական կառավարութիւնը ապստամբներին
պատերազմող կողմ է ճանաչում: Այստեղի

Դիպլոմատական շրջաններում լուր է տա-
րածված, որ հարկաւոր դէպքում Անգլիան
միտիակ կը գործի: Իսկապէս այլապէս
միւթիւնը հնարել են սուլթանը և
նրա մերձակորդները Ներսիսյան վախճանը
համար: Բ. Գուրու սկսում է նոյն
խաղը և Հայաստանի մէջ խաղալ
4. Պոլսի մէջ այժմ ասորոյ երգումը ան-
դիպական հիւսիսաւոր, մայր ծրարորդ, պատ-
մուհի է, որ թէպէտ մինչև այժմ չէ տեսել
քրդական լի գա, որի մասին խօսվե-
ցաւ անգլիական պարսկական մէջ միայն
նկատել է, որ թիւրքերն և քիւրդերն
քրիստոնէականներ չափերին քաղաք արտո-
նութիւններ են արժանի: Քիւրդերը, իրանց
արարքները համար չը պատժվելով, հետզհետեւ
աւելի յանդուգն են դառնում: Թիւրք պաշ-
տօնականներ կամ նրանց հետ համախոհ են,
կամ անգործ, այնպէս որ Հայաստանը ցաւալի
անխելանութեան պատկեր է ներկայացնում:
Ներսիսյան թիւ, սեպտեմբերի 6-ին մեծ պե-
տութիւնների վեց ներկայացուցիչները հա-
ւաքեցին կոմս Հաքմիլի մօտ Գոշնի և
Տիսուսի մէջ: Կանադայի հայկական
հարցի մասին քննելու համար: Մտաւո-
րապէս քան Երևանից բաղկացած այդ
կանադայի կարգի է պատասխան համա-
րել: Ներսիսյան վախճանը գրութեանը նոյն
առարկայի վերաբերութեամբ: Այդ կանադա-
գրի մէջ ասված է, որ Թիւրքիայի առաջար-
կութիւնները բուսականացուցիչ չեն ար-
դարացում: Թիւրք և լաւ վարչութիւնը
Հայաստանի մէջ պարսկական համար: Սայդ
վախճանի մոտքած դատաստանական վերա-
նորոգութիւնները ոչինչ ազդեցութիւն չը
գործեցին: Ներսիսյան վախճանի առաջարկած
անգլիական քրդական դատարանները նոյն-
պէս անհամապատասխան են Հայաստանի
պահանջներին: Սակայն առաջ կեանքը և
սեփականութիւնը պաշտպանելու համար
պէտք է կազմել մի թուով բաւականացուցիչ
և երկրի գրութեանը համապատասխանող
ժամանակների զօրաբանութիւն: Իսկապէս մին-
չև անգամ պնդում է, որ քիւրդերին կարելի կը
լինի երկրի մէջ պահել միայն այն դէպքում
եթէ Հայաստանը գրաւեն 50000 լաւ զինուոր
ված զօրքեր: Ուստի կառավարութիւնը
հաճութիւն տուեց պ. պ. Գոշնի և Տիս-
ուսի բոլոր առաջարկութիւններին Հայաս-
տանի համար: Կասկած չը կայ, որ միւս
կառավարութիւններն էլ հաւանութիւն կ-
անան: Սիւյն հետեւալ հարցը առաջ է դա-
րիւ: Ո՞ր պէտք է իրագործէ վերանորոգման
այդ բոլոր առաջարկութիւնները: 1878
թուի յունիսի 4-ի դաշնագրութեան հա-
մեմատ այդ գործը պետք է Անգլիան կա-
տարէր, բայց, ինչպէս յայտնի է, այդ պե-
տութեան ձայնը ներկայումս Թիւրքիայի
մէջ շատ քիչ կշիռ ունի:
Բամազանի վերջին օրերում սուլթանը մի
քանի անգամ հրաւիրել է իր մօտ Ներսիս-
յան վախճանը: Դրանից ենթադրում են, որ սուլ-
թանը մտադիր է նրան մի բարձր աստիճան
տալ: Այս ենթադրութիւնը շատ հաւանա-
կան է, որովհետև Ներսիսյան վախճանի
թշնամի է:
Սրտաբան գործերի միջնորդութեան մէջ
օրերում հետեւալ անցքը պատահեց: Դը-
րագրութեան գլխավոր Սարգիս-Էֆէնդին, որ
վաղուց թշնամի էր մուսուլման Ներսիս-Էֆէ-
նդիանի, Սալիմ-փաշային մի նամակ
յանձնեց, որ ուղղված էր օտար դեսպան-
ներին մէկին: Նամակի մէջ այնպիսի յայ-
տնութիւններ կային, որոնք պետական յան-
ցանք են կազմում: Սուլթանը քննութիւն
նշանակեց, որից երեւաց, որ նամակը կեղծ
է և Սարգիս Էֆէնդին պաշտօնական է և
թույլ Սարգիս Էֆէնդին պաշտօնական է և
դաժ:

ՅԱՄԱՆԱ
Ընթերցողներին յայտնի է, որ նորերում
Ֆրանսիայում միջնորդական կրիզիս պատա-
հեց, որի հետեւանքը Ֆրէյսիսի միջն-
որութեան փոխվելը և նորի կազմակերպ-
վելը եղաւ: Այդ անցքի առիթով լրագրի-
ները մէջ կարգում են հետեւալ տեղե-
կութիւնները:
Ֆրանսիայի մէջ պատահած միջնորդական
գծուարութիւնների պատճառը մարտի 29-ի
հրամանների գործարկելու հարցը պէտք է
համարել: Ֆրէյսիսի ստիպված էր հրաժա-
րական տալ, որովհետև չէր կամենում ար-
ձակել արգելադրած միջնորդութիւնները, պար-
տաւորացնելով նրանց չը զբաղվել քաղա-
քականութեամբ: Չը նայելով, որ Ֆրանսիա-
կան պատգամաւորների ժողովը արձակված
էր, այնու ամենայնիւ նրա անդամների մե-
ծամասնութիւնը ընդդէմացաւ այդ քայլին
և բացի այդ միջնորդութեան անդամներից
մի քանիսն էլ հրաժարվեցան կատարել Ֆր-
էյսիսի ցանկութիւնը: Այս անհամաձայ-
նութեան պատճառով առաջ հրաժարական
տուին ներքին գործերի, արդարութեան և
զինուորական միջնորդները և լիտոյ Ֆր-
էյսիսի ստիպված էր թողնել իր պաշտօնը:
Հանրապետութեան նախագահ Ժիւլ Գրիվի
ընդունեց նրա հրաժարականը և նոր միջն-
որութեան կազմելը յանձնեց Ժիւլ Ֆեր-
րիին, որը ինչպէս յայտնի է, առաջարկեց
հոգեւոր միջնորդութիւնների դէմ ուղղած
օրէնքները:
Փաստերը սրանք են, բայց սխալ կը լինէր
ենթադրել, որ միայն այդ անցքերն են մի-
ջնորդական գծուարութիւնների գլխավոր
պատճառները: Ֆրէյսիսի ընկաւ ոչ թէ այն
պատճառով, որ կամենում էր ազատել հո-
գեւոր միջնորդութիւններին, այլ որովհետև
վերջին ժամանակներում բոլորովին չէր բա-
ժանում Լէոն Գամբետայի հայացքները թէ
արտաքին և թէ ներքին քաղաքականու-
թեան վերաբերութեամբ: Ֆրանսիական նա-
ւերի Բազուզա ու ռազարները և Ֆրանսիայի
յանկարծակի սաւառութիւնը դէպք էր սե-
փական շահերը Ֆրէյսիսի գործն էր, որ
այս անգամ բացարձակ ընդդէմացաւ պատ-
գամաւորների ժողովի հզօր նախա-
գահի գլխավորութիւններին և նախ-
ապահներին: Գամբետայի յայտնեց: Նոր
միջնորդութիւնը կը կազմվի այնպիսի մարդ-
կերանից, որոնք կատարելապէս բաժանում
են Գամբետայի հայացքները: Ինչպէս մար-
տի հրամանները իրագործելու, նորիս և
Ֆրանսիայի արևելեան գործերին մասնակցելու
վերաբերութեամբ: Նոր միջնորդութիւնը
Ֆրէյսիսի կառավարութեան ընդդէմ
տարբեր կը գործի:
Ֆրէյսիսի Հանրապետութեան նախագա-
հին ուղարկեց հետեւալ նամակը:
ձաւ մտածելուց լիտոյ ես այն եղբայր-
ացութեան հասցի, որ նորերում փոփոխված
միջնորդութիւնը չի կարողանայ երկարատե-
լիներ: Իմ և իմ մի քանի ընկերների հայացք-
ները այնքան տարբեր են, որ անկարելի է
յուսալ թէ կարող է համաձայնութիւն
կայանալ զոնեա փոխաբար զինուորների օգ-
նութեամբ: Եթէ շարունակվի գործերի այս
պիսի դուրսութիւնը, նա կը վնաս երկրի
շահերին և խաղաղութեանը: Գիտեմաղով
որ իմ հրաժարականը ձեզ միջոց կը տալ հեշ-
տութեամբ վերջ դնել ծագած գծուարու-
թեանը, խնդրեմ ընդունեցէք հրաժարա-
կանս:
Գամբետայի օրգան «Republique Française»
լրագրի մի յօդուած տպեց, որտեղ ասված
է, թէ արտաքին քաղաքականութեան հար-
ցերը միջնորդների վերջին նիստերի ժամա-
նակ վիճարկութեան առարկայ չեն եղել:

Ոչ որ չէ առաջարկել Ֆրէյսիսին, որ նա
հրաժարվի խաղաղապետ և զգոյշ քաղաքա-
կանութեան: Անհամաձայնութիւնը Ֆրէյ-
սիսի և նրա ընկերների մէջ ծագել է
մարտի հրամանների իրագործելու հարցի
պատճառով:
ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ
4. Պոլսի, 8 սեպտեմբեր
Ներսիսյան եկած քաղաքական հետադիւրսն
կառավարութիւնը լրագրաց չի յանձնել, հետեա-
րաւ չեմք գիտել թէ ինչ կը դառնայ մինչև երե-
պական օրագրիները հասնեն: Սակայն պարտք և
Բ. Գուրու շարունակ յուզման մէջ են, անդադար
ժողովներ Սուլթանի նախագահութեան ներքե, թէ-
պէտ այդ ժողովները դադարեցնեն դուրս չեն ելել,
բայց Stamboul (որ միշտ լաւ տեղեկութիւններ
կը ստանայ) ակնարկութեան մը կը լինի թէ պաշա-
տի խորհրդաց մէջ կը ջանան որ նախապէս ցոյց
միայն Սուրիանի մէջ սահմանափակուի: Արդեօք
ստոյգ է այն լուրն, որ կը տարածուի թէ միա-
ցեալ նաւատորմին մինչև Տիսուս-Պաշէկ պաշա-
տի առջև խարխիւ պիտի նետուի: Ինչ որ ալ լինի,
կերել թէ մեծ ձգնաժամներ կանցնէ Թիւրքիա և
կերպարանք, անօրինակ ատուութիւնը մը ցոյց կու-
տան չայոց դէմ, զի կըսեն թէ արդէն յոյներն
միշտ կասկածու են, զարատացել անդադար
իրենց դէմ մարտնչած են, բայց չայոյն կը նկատվին
իրենց հաւատարմի չպատասխանելու անդադար
ուղիղ ուղիներն, բայց այժմ անոնք ալ կը սկսին
պաշտպան հետեւ և զանազան դերակցանքներ շա-
ղի մէջն են: Թուրք մուսուլման կը ներկայացնէ հա-
սարակալ կարծիք, և գծուար կը լինի տաճիկ-
րէն թիւթ մը բանալ յորում չայոց դէմ կըսու յո-
ղաւանդել չըլան: Ֆրանսիա-Թիւրք Օսմանի թիւթը
ստիպ իր առաջնորդող յոդուածներն չայոց դէմ
յարձակմանց կը նուրէ, ինչպէս է այս առաւօտ
հրատարակած: Ամբաստանութիւնը Պատրիարքի
վրա կը բարձրանի իր գլուխ չարեաց, և յիմար-
ներն կը կարծեն թէ Պատրիարքի անձնակազմու-
թեան մէջ տեղէն վերջնեմ, չայկական խնդիրն
կը վերջանայ: Պատրիարքի ծառարարութեան եղաւ
մեր հարցը եւրոպական խնդիր մը ընել, այդ
խնդիրն յաջողեցնելու ամենայնաւոր անձն է Ներ-
սիս, բայց կը լինի վերջնեմ, իրեն յաջողին
ուրիշ կերպով չէ կարող շարժել: Բայց կը պտը-
տի թէ թիւթաց կողմէ ազդարարութիւններ եղած
են Ներսիս Սրբազանի որ կամ չայկական խնդիր
բաժնի լուցնէ, կամ կընեն զայոյնի հարաւանդելով
պիտի լուցնեն: Չեմք գիտել թէ ինչ աստիճան
ստոյգ է այս լուրն, սակայն Սրբազանը որ արդէն
շատ վատաւոր է, բոլորաց խորհրդով յարմար
սեպած էր իւր բնակութիւնը հաստատել Վստօրի
ասիական ափանց վրա, Գանդելի բնակած թաղը
որ շատ առողջարար օդ ունի, բայց գրեթէ ամ-
բողջապէս տաճիկներէ բնակեալ է. քիչ չայ կան:
— Այս օրերս իւր բնակութիւնը Սրբազանը անկէ
կը փոխադրէ ի Քաղկեդոն Վարդապետի վրա, և
ուրիշ պիտի երթայ մի քանի օրէն ի Խաւս-գիւղ
(Սակիշիւրի ափուքը), հոն ամենքն ալ չայ են:
Սրբազանը աներկելու է, բայց խոշմութիւնն ալ
ձեռքէ չը ձգելու կը համոզեն զինքն բարեկամ-
ները: Ինչպէս որ արդէն գրած էինք, եւրոպական
ժամանցագիրն չայոց նկատմամբ արտաքին կարգի
խիստ ոճով մը գրուած է, որոյ կը վկայեն տե-
ղայն թիւթերն: Դեռ այդ ժամանակներն չը հա-
տարակրկեցաւ, բայց կըսուի թէ Պատրիարքը շատ
զոհ է իւր այսքան իսկ չէ պահանջը, ըսած
է: — Սեպտեմբր նամակով գրեցինք թէ Պատրիարքը
ազդու ժամանցագիր մը կը խրէ Բ. Գրան թիւթը
մամուլ ընթացքին նկատմամբ, որ տաճիկներն
չայոց դէմ կը գրգռէ: Պատրիարքը կը պահանջէ
որ այս լուր չընթանայ դուրս ելլէ տաճիկ մա-
մուլը: Այդ ժամանցագրի թարգմանութիւնը կը
գտնէք «Մատիս» մէջ: Կը նկատենք որ Պատ-
րիարքը գրելու սովորական ոճը փոխել է: Ստեն
մը ուրիշ կերպ չէր կրնար գրել, բայց կը չէ հե-
տեւալ բառերով, Ձեռք մ'ենալ ուսուցիչ դեր
էր յայտնաւորուած Էր, և այն և այն: Այժմ
գերեզման Էր և պաշտօնաւորներ տեղ պա-
հանջ բառերն յաջողեցնել են: Թիւրքերն շատ ու-
ղադրութիւն ըրած են այս կէտերուն և ակնարկու-
թիւններ կընեն, «Հաբիբաթ» կերել թէ չայոց
Պատրիարքը, կըսէ թիւթը թիւթը, դեսպանաց ժա-
նուարներն համարձակութիւն կուտան, անոնց ո-
ճին կը հետեւի և սովորական լեզուն կը մուտ-
նայ:

Պատրիարքական ժամանցագիրն մի քանի օրի
նակ եղած է մին Սուլթանին խրկուած, միւսներն
մեծ նախարարաց: Դիտելք ինչ պատասխան կըն-
դունի: Սուլթան-նախարարի կողմէ իրեն խիստ
ազդարարութիւն մը կըլլայ, սրա մասին նախորդ
նամակաւ գրած էինք. այդ ազդարարութեան մէջ
Բ. Գուրու կը հրամայէ Պատրիարքի որ այլ ես
նմանօրինակ ժամանցագիրներ պիտի չը խրէ: Թէ
իւր պաշտօնէն դուրս ս և է բանակցութիւններ
պիտի չընեն (այսինքն դեսպանաց հետ յարաբերու-
թիւններ պիտի չունենան) և թէ իւր գրութեանց
մէջ Հայաստան բառը չը պիտի գործ ածէ (!!!)
— Չեմք գիտել թէ իւր պիտի պատասխանէ Պատ-
րիարքը այս ազդարարութեան, բայց շատ գծուա-
րութիւն չը պիտի կրէ, կերել թէ Բ. Գուրու դեռ
լաւ մը չը գիտել թէ ինչ վիճակի մէջ են խնդիր-
ներն: Ինչպէս կրնայ արգելել Պատրիարքի մը,
որ հայկական խնդիրն կը յարուցանէ, Հայաս-
տան բառը չը գործածել, միթէ խնդիր մօտ է:
Ինչպէս կարգել չայոց առաջնորդին Բեր-
լինէ, Քաղկեդոնի յօդուածի գործարարութիւնը չը
խնդրել Ներսիսյան, ուրեմն կառավարութիւնը ս
և է կարողութիւն չընալ Ներսիսյան խորհրդացը,
պահանջել որ պատրիարքը առանց նկատողութեան
թույլ տայ որ իմար մա'ուլ մը ժողովուրդներն
երկպառակութեան մէջ ձգէ, — զայդ չեմք, կարող
ըմբռնել:
Բ. Գուրու դեռ պատասխան չէ տուած չայոց
խնդրոյն վերաբերեալ վերջին ժամանցագիրն: —
Մանուցագիրներ զորոյում ենք:
Հայկակ
ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ
Թէյսան, 1 սեպտեմբեր
Թիւ չանի «Ընթերցողներ» ընկերութիւնը «Մը-
շակ» լրագիրը կարգաւոր, տեղեկացաւ 4. Պոլսոյ
Ներսիս պատրիարքի թիւնաւորութեան վառնեց
ազդարարութիւն. այս ուրախութիւնը տարածվեցաւ
ժողովրդի մէջ, ժողովուրդը աւապունց հետագրով
Նորին Սրբազանութեան ազատութիւն շնորհագրել
աջաւ հետագրի պատճառով:
«Նորին Սրբազանութեան Ներսիս պատրիարքի
չայոց. Թէյսանի չայ հատարակութիւնն աւապու-
րում է շնորհագրել Ձեր Սրբազանութիւնը. և ջերմ
ուրախութիւն անում Ձեր թանկագին կենաց պահպա-
նութեան համար»:
Հաւատարմութիւն երկու կրկնով տարանք սւել
չը կարողայաւ բացայայտ հետագրի անկը որով-
հետև նոյն լրագրի մէջ տեսաւ, որ այս առաջանքն
եկեւ Ս. Պատրիարքի անունով շատ հետագրիներ
և նամակներ վար են արած, ժողովուրդն հանգա-
նակութիւն արեցին պատարագ մատուցանելու և
մի ճանկաւ կատարելու նպատակով:
Այս մասին կրկնի օրը Ղազարեան թաղի ս.
Գեորգ եկեղեցումը պատարագ մատուցվեցաւ, որի
պատարագիւր արծ. տէր Գառնար Տէր-Սիմէոնեան
լինելով, կարճատեւ մի քարոզ տարով, բացարկեց
նոյն օրուայ ճանդիսի նպատակը: Յետ աւարտման
ս. պատարագի ժողովուրդը խուռն բազմութեամբ
քահանաներով և եկեղեցականներով զմեզին Հայ-
կազնեան վարժարանի սրահը, որի սենյակներից
մինի մէջ պատարագած էր փառաւոր սեղան, նրա
վերի կողմը դրած էր ս. Պատրիարքի պատկերը
զարդարած ծաղիկ պսակներով: Վարժարանի նախ-
կին կամ նոր աշակերտը երկեցին ազգային երգեր,
կարդացին ծառեր, մայրնանքներ. իտ արարողու-
թեան ժողովուրդը անցաւ միւս սենյակը. և նստաւ
պատ, աստ սեղանի շուրջը: Պարպկեցան Ն. Սըր-
բազանութեան կենաց համար շատ բաժաններ, ին-
չկով չայոց ազգի համար նրա արած բարեգոր-
ծութիւններն և ջանքը: Նոր ճանդիւր աւարտելով,
ժողովուրդը տարաւ իր հետ անմոռանալի մի յի-
շատակ:
Մ. Յ. Բոլկանց
«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ
Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 17 սեպտեմբեր: Այսօր
հասաւ Ս. Պետրոսեղ ռուսաց դեսպանը
Ձինտատանի մէջ Բիւրցով: Ստում են, որ Բիւ-
ցով հրաւիրված է Յովնդի հետ պայմանա-
ներ կապելու ժամանակ ներկայ դանդիւր
համար:
ՐԱԳՈՒՋԱ, 18 սեպտեմբեր: Ալբանական
միաբանութեան հրամանով Գուլյինիօ քա-
ղաքը այրված է:
Բժաղիւր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս է գալու մամուլի տակից Ներկայացուցիչ Յ. Ալեքանան շարադրութիւնը. Երուանդ Երկորդ, որքերգութիւն չինգ արարուածի մէջ ոտանաւորով գրած: Գինն է երկու ռուբլի: Գրականագետները պահանջելով մինչեւ հարկը հատար ունեն 10% ղեջումն. իսկ աւելի—20%: Փողտի ծախսը չեղիւնակը առնում է իր վրա:

Ցանկացողները կարող են դիմել ուղղակի հետեւալ հասցեով:

Въ Майкопѣ, Кубан. обл. Мировому Судѣ 1 Участка, Николаю Иосифовичу Алиханову.

1—5

ՀԱՅՏԵՐՆԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՐՈՒԹԻՒՆ, ՖԻՆԱՆՍԵՐՆԻ ԵՒ ԻՏԱԼԵՐՆԻ ԴԱՍԵՐ: ԵԶՆԿԱՆՑ, Հասցեն հարցնել «Մշակի» խմբագրատանը:

5—5 (2)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՅՈՂՈՎԸ յայտնում է, որ սեպտեմբերի 21-ին կը բացվեն արհեստական և սկզբնական ուսումնարանները, իսկ սեպտեմբերի 15-ից կը կարգվեն ընդունելական քննութիւնները:

3—3

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնէ ՅԱՂԱՔԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐԻ, իբրեւ երգեցողութեան դասագիրք հայ դպրոցների համար: Գիրքը բաղկացած է երկու մասերից. I մասում գեղեցիկաճ եւ թէ տպուած իւր միջնակայ միջոցաւ և ամեն տեղ տարաճուած երգեր: II մասում մանկական երգեր: Մարկապոլը այն առաւելութիւնն ունի միւս երգարաններից, որ իւր մէջ չէ պարունակում դպրոցական հասակին անվայել և անյարմար երգեր: Հետաքննելից զխաւոր տեղերը բռնում են Նալբանդանց, Պէշկիթաշեան, Նարբէյ, Ֆէլէկեան, Պատկանանց, Ալիշանեան, Բարխուդարեանց, Արդեան, Գուրեան, Հայկունի, Թաղիթեանց, Շահադիդեանց, Դուրանեանց, Մէղպուրեան, Ալլազեանց, Թերզեան, Մելիք-Յակոբեանց, Մուրադեանց և այլն և այլն.

2—2

Մի Ազգայնացի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մադագասկարում որից ապահովելու համար ունի երաշխաւոր տնայնք, սպանանների համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

8—8

«ՓԱՐՈՍ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ» պատկերազարդ հանդիսի ներկայումս երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Եյս տետրին մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութնը նկարուած են փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան, վարդապետ, Ալազեան արքայապետ, Միքայէլ Միանսարեանց, Կուրար-Փաշա, Կարին բաղաբ, Պետրոսեղայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց ի Կարին, Սովեալ Հայ բնտանիք ի Վան, Վան բաղաբ, Կազմ Հայերէն աւետարանին, նուիրելոյ Կորին Կայսերական Մեծութեան ի Կաթոլիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայումս բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետեւ իւրաքանչիւր տետրի համար 1 ռ. 50 կ:

Տիրիսում ստանալ կարելի է պ. Ռ. Գրիբորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Օրմանյը Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարեւոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմադրաց հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի չիլա թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղեւտներ յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ռ.

ա. և բ. հատորը միասին 2 ռ. 25 կ,

բ. և գ. հատորը միասին 2 ռ. 25 կ,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% ղեջումն կը դրուի:

գնելու համար դիմել—Ալեքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տիրիս—Անդրոնական գրավաճառանոց:

Մոսկով—Հայոց եկեղեցու երկցիտեան պ. Մելքոն Փանեանցին:

10—10

ՎԱՂԱԿԱՎԱՍՏԱՆ ՕԳՈՒ գործարար պահեստ թիֆլիսում ՇԱՌԻ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկզբիցն ծախվել ամենալաւ մարքոված ՕԳՈՒՆԻ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲԻՆՊԵ և ԲՈՒՄՍԵՐԻՆԻ: ՇԻՂԵ ամանով արժէ 45 կ, առանց ամանի 38 կ, կէս շիՂԵ 25 կ, առանց ամանի 20 կ, և, ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում. Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՏԻՑ շագիկ մաքրելու օգնութեամբ և իրան յատուկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողներ իւշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յենարաշայա հիւրանոցի տակ, Լիսապոլսկու տանը, Վարդանի արձանի դիմացը:

7—8 (2 շաբ.)

ԻՃԱԿԱՆՈՑ

ՀԻՄՆԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՊՈՏԵԱՆ 9. ԻՑ ՄԻՆՁԵՒ 1 ԺԱՄԱՆ

Երկուշաբթի. Գալլօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գորալվիչ ներքին հ., Գիւլաբեանց խիբուրդիական և աչքերի հ., Շտեմբորսկի վերնբաւան և կաշու հ.:

Երեքշաբթի. Միսկիլի խիբուրդիական հ., Միրօշնիչ ներքին, կրծքային և երկտաների հ., Կրիզեր ներքին և երկտաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երկտաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտեմբորսկի վերնբաւան և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գալլօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչ ներքին, կրծքային և երկտաների հ., Լիսիցեվ ներքին հ., Գիւլաբեանց խիբուրդիական և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Միսկիլի խիբուրդիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երկտաների հ., Շտեմբորսկի և Աստուածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիզեր ներքին և երկտաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Աստուածաբան Օբրեստ աղքատ հիւանդանոցին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ: Բացի իրակի օրերից ամենայն օր առաւոտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունվում են մանկաբարձ իր հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գիրեկտօր Լիսիցեվ:

Ներկայ սեպտեմբերի 1-ից ՀԱՌԻ ՔԱՐՈՒՄ բացվեցաւ մի հայոց ՄԻՍԿԱՆ ԳՊՐՈՑ: Հրաւիրում ենք օրա վրա Հաւարացիների ու շաբաթը թիւնը: Աշակերտներ ընդունվում են ամեն օր մինչև տարուայ վերջը: Իսկ յետոյ կոնաւի. ընդունելութեան ժամանակամիջոցը: Փողալի մասին կարելի է տեղեկանալ ուսումնարանում, որ գտնվում է Մարիամեան դպրոցի մօտ, Вахтанговская уллица, № 32.

2—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ յայտնում է, որ նա արել է հետեւեալ կարգադրութիւնները. 1) խառով և փայտով բեռնաւորված սայլերին թոյլ չը տալ կանգնել Հաւարարի հրապարակի վրա, այլ ուղեւորել նրանց Լօրնայա հրապարակը, որ առաջինի մօտ է գտնվում և 2) Արեւանդրօպկայա և Անդրեկօպկայա փողոցների մէջ գտնված Կոկիկայա հրապարակը բանալ և դիւղայիններին ուղարկել այնտեղ ճիւղաբար կանգնելու համար:

2—3

Ընդունում են ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԵԿՏՆԵՐԻ, ՊԵՐՈՃԻՆԻ, ՍՈՒՌՈՒՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՈՎԻ ԿՈՆՖԵԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմաբար. ցանկացողը կարող են դիմել ինձ հետեւալ հասցեով. Въ Тифлисе, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНѢ ВАРШЕВСКОЙ ПЕКАРНЯ. Բնակարանը կօնֆէկտ պահանջողների ծանուցարհաճախը ինձ վրա են առնում,

Մ. Հախնազարեանց.

12—50

ՆՈՐ ՀԵՆԴԻՍ ՖԻԼԻՊՈՎԻՉԵՒԻ ԸՆԿ. ԼՈՒՍԵՆԿԱՐԻ չորս ամսվայ գործունեութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօրյովսկի փողոց, տուն Կ. Լա. Օւրբայովի, Թիֆլիսի կրթութի մօտ: Բաց է ամեն օր առաւոտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:


1—10

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և 2. Գրիբորեանցի գրախանութներում Ս. Մանիքեանի հետեւեալ դասագրքերը.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբեկարան (առաւելու ուսմանը և ընթերցմանը) . . . 25 կ
2. Նոյնը ուսուցիչներին համար բացատրութիւններով (հանդիս) 75 կ
3. Ազգային Դիւցազնական աշխարհք (բ. տարուայ ուսմանը և ընթերցմանը) 30 կ
4. Նահապետական և հայրենի աշխարհք (բ. տարուայ ուսմանը և ընթերցմանը) (բ. տարուայ ուսմանը) 65 կ



Կ. ՊԵՆՏԵՐ ԼՏԱՄԵՆՍԻՆ ՍԿԵՆ ՓՈՂՈՑ տուն ՕՈՒՐԵԼՈՎԻ: Եկող ճրվող սեպոնի համար առաւելում են պատուելի հասաւարակութեանը ՄԵՏ՝ ԲԵՆԿԱՌԵԼՄԻ ՉԵՌԻՒ և ՈՏ՝ ԲԻ կարի ՄԵՔԵՆԵՆԵՐ, երօպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԵՆԵՐԻՑ, ամենանոր ՉԵԻՆԻ, չափազանց ԼԵԼԵՆ գնելով, այսինքն: Չեւքի մեքենաներ 12—5 ռուբլ: Ուրբի 50—80 ռուբլ:



7—52